



ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ



մենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Ս. Տ. Գեորգ Զ. Հայրապետի անվան հետ սերտորեն կապված պիտի մնա անշուշտ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վերջին լայնածավալ և համայնապարփակ նորոգությունը, որի աշխատանքները, սկսվել էին, երբ դեռևս ողջ էր արքեպարք Հայրապետը և շարունակվում են ներկայումս ամենամեծ թափով և ուշադրությամբ:

Ընդգծում ենք լայնածավալ և համայնապարփակ բառերը, որովհետև ներկայումս կատարվող աշխատանքներն ընթերցվում են ոչ միայն Մայր Տաճարի և Վեհաբանի՝ ժամանակի և բնության ազդեցության ներքո հնացած, մաշված և խաբխրված մասերի վերանորոգումը, այլև արմատական վերամշակումը ներքին նկարագրորոշյալ, դորժ՝ նշանավոր նաղաշ Հովնաթանի (ծն. 1661 թ.) և նրա թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի (18-րդ դար), ինչպես նաև արտաքին հողակերտ պարսպի հիմնովին բանդումով և տուֆաքարաշեն պարսպի կանգնումով, որը, շտապենք ասելու, արդեն վերջանալու մոտ է:

Հայ եկեղեցու պատմության ժանոթ ամեն ոք գիտի, թի Ս. Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական փայտաշեն կառուցումը տեղի է ունեցել Քրիստոսի 303 թվականին՝ Տրդատ Մեծ թագավորի և Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ, իսկ 485 թվականին, Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանը, փայտաշեն եկեղեցու տեղ, նոր տեղ և ժամանակի պահանջած հատակագծով շինել է քարակերտ եկեղեցին, որ հետագային վրել է զանազան նորոգություններ և նույնիսկ հատակագծային փոփոխություններ:

Մայր Տաճարի առաջին կարևոր նորոգությունը տեղի է տեսնել նախապես Մամիկոններից եպիսկոպոս և Ս. Հովհաննիսյանի վանքի

փակակալ (լուսարարապետ) Կոմիտաս կաթողիկոսի օրով (7-րդ դար): Նրան է վերապրվում մասնավորապես փայտաշեն քարեթի տեղ քարաշեն քարեթի կառուցումը: Սակայն հատակագծային աչքառու փոփոխությունը կատարվել է ներսես Գ. Շինող կաթողիկոսի ձեռամբ (7-րդ դար, Կոմիտասից 20 տարի հետո):

Ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի հայտնած հեղինակավոր տեսակետի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարն սկզբում եղել է քառակուսի, իսկ այժմյա խաչաձև վիճակը ստացել է ներսես Գ. Շինող կաթողիկոսի կատարել տված նորոգությունների ժամանակ (642—662 թ. թ.): Մեծանուն ճարտարապետը, մանրազնին վերադավ ուսումնասիրելով հայ եկեղեցական ճարտարապետության տեղ և Մայր Տաճարի հնագույն պատերի վրա տեսնվող ճարտարապետական հատուկ կենտ փշրանքները, հայտնում է այն միտքը, թե «ներսես Շինող կաթողիկոսը, թերևս տաճարը ընդարձակելու դիտավորությունով, չորս կողմից քառակուսի պատերի մեջ ամփոփված աբսիդները (խորան—Ս. Հ.) արտաքին պատերից դուրս հանեց, ինչպես որ այժմ կոտեսնվի: Ուրեմն, հատուկագծի վերջին ձևը տրվեցավ 7-րդ դարում»:

Ներսես Շինող կաթողիկոսից (7-րդ դար) մինչև Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսը (17-րդ դար) անցնող տասը դարերի ընթացքում, Մայր Տաճարի վրա ոչ միայն կարևոր նորոգության հիշատակություններ չենք գրում մեր պատմիչների մոտ, հակառակ այն իրողության, որ Կաթողիկոսական Աթոռը Կիրիկիայից (Սաից) Էջմիածին է փոխադրվել 15-րդ դարի առաջին կեսին (1441 թ.), այլև ընդհակառակը, ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ «ճորժամ Մովսես վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսելին

վասն հողորդն և մոխրոյն, որ բլրացեալ կայր շուրջանակի, թէ զիս րդ պիղի...»։ Նշանակում է, որ 1729 թվականին Մայր Տաճարը գտնվում էր հողի և մոխրի բլրի տակ և Սյունյաց անապատի փառքն ու պարծանքն եղող և Երևանի Ամիրզումար խանի պաշտպանությունը վախճող Մովսես վարդապետի (ապա կաթողիկոս) ձեռամբ, հիմնական նորոգություններ կատարվեցին Մայր Տաճարի վրա և նրա շուրջը կառուցվեցին պարիսպներ և նոր շինքեր, որոնց մասին պատմագիր Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ դպարիսպն զոր շինեցին, այսպէս ձեռնեցին։ Որպէս և տեսանի յեկեղեցոջ անդ շորիքին խորանք ակեղեցոյն, որք կան յօրինակը ի նմա ընդ շորս կողմս աշխարհիս, յարտաքուստ կռակ՝ եկեղեցոյն ի ճակատաց այս շորից խորանացս։ ...Եւ ապա ի մէջ պարբնային արեւմտեան կողմն շինեցին դարպասք և տունք ի պէտս ինքեանց և հիւրոց. և ի հիւսիսային կողմն և յարեւելեան կողմն շինեցին խցեր ի բնակութիւն միաբանից. և ի հարաւային կողմն շինեցին սեղանատուն, փռնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց։ Եւ ամենայն շինուածք այսոքիք, միայն պարիսպն ի հողոյն եղև շինեալ, իսկ այլքն՝ ամենքեան լիտեալ քարիւ և թրծեալ աղիւտով և կրով և բոլով շինեցան փեղեցիկ և վալելուշ յօրինուածովք։

«Ճեստ այսորիկ զեկեղեցոյ գմբեթի տանիքն նորոգեցին, քանզի առեւրն քանդեալ և ի տեղոյն ի բաց ուստեալ էին։ Եւ թէ որ տեւչացեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի Սուրբ Էջմիածնի, այսքան է. յիսուն Հալաբի գաղ երկայնքն է յարեւելից դէպ յարեւմուտս. եւ Հալաբի լայնքն է հիւսիսոյ դէպ ի հարաւ. Ի՞նչ Հալաբի բարձրութիւնն ոչէպ ի հարաւ. Ի՞նչ Հալաբի բարձրութիւնն է ներսի կողմանէն Կաթողիկէի՝ պորտէն մինչև ի գետինն. այս չափերս եկեղեցոյ մէջն է ներսի կողմն, թող դպատեմն»։

Մովսէս Տաթևացի կաթողիկոսի Մայր Տաճարում կատարած վերոհիշյալ շինարարություններից հետո, մասնակի նորոգություններ կատարված են նաև Փիլիպոս Աղբակեցի (1633—1655 թ. թ.) և Հակոբ Գ. Ջուղայեցի (1655—1680 թ. թ.) կաթողիկոսների ձեռամբ։ Փիլիպոսը սկսել է զանգակատան շինություն, հակառակ Երևանի խանի կամքին, բայց դեռևս չավարտած շինությունը՝ վախճանվել է և թաղվել Ս. Հռիփսիմի վանքում։ Հակոբ Ջուղայեցին, շարունակելով նախորդի սկսած շինարարությունը, ոչ միայն ավարտել է զանգակատան կիսաամնացած շինությունը Շահի հրամանով, այլև կառուցել չորս լճակները՝ Էջմիածնապատկան դաշտերի ոռոգման համար։ Ներկյա լճակը՝ Ներսիս Աշտարակեցու նորոգածն է։

Մայր Տաճարի գմբեթների շինության և տանիքի նորոգության կապակցությամբ հիշվում են անունները Նղիազար Այնթապցի կաթողիկոսի (1682—1691 թ. թ.) և Նիկոն կաթողիկոսի (1810 թ.)։ Ավելի ուշ, նորոգություններ են կատարվել նաև Մակար և Գեորգ կաթողիկոսների օրով։ Իսկ նրանցից հետո Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի վրա բազմած կաթողիկոսները միշտ երազել ու ծրարել են Մայր Տաճարի արմատական նորոգությունը, բայց բախտը չեն ունեցել իրականացած տեմեղու իրենց այդ երազը, որովհետև նման նորոգության համար կարիքը կար հսկայական գումարների, և հայ մեծահարուստներն ամուր էին կապել իրենց ցավների բերանները։

Նորոգությունների պակասի հետևանքով էր անշուշտ, որ Նղիազար կաթողիկոսի շինել տված երեք փոքր զանգակատներից հարավային խորանի վրայից փուլ էր եկել 1921 թվականին։ Փլած զանգակատունը չէր վերականգնվել՝ չձանրաբեռնելու համար 13 դարի հնություն ունեցող խորանի պատերը, բայց փոքրումից խախտված մասերը նորոգվել էին ըստ հայկական ոճի՝ ակադեմիկոս ճարտարապետ Թամանյանի ցուցմունքի համաձայն և ճարտարապետ Թորոս Թորամանյանի անմիջական հսկողությամբ ներքո։

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնական նորոգության հարցը առաջնահերթ հարցն էր, որ հուշում էր երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի միտքը։ Նա, որպես հայրագործով Հովվապետ, հորթման-երթման բախում էր արտասահմանում բարերար ազգայինների սրտի դռնակները, որպեսզի հիշեն «Էջմիածնի լուսան», բայց երբ շարժարացան նրա հուշերը, նա դիմեց հայրենի կառավարության, որը ընդառաջեց Վեհափառի բաղձանքին և իր վրա վերցրեց վերանորոգության գործը, նայելով Էջմիածնի Տաճարի վրա որպես պատմական և ճարտարապետական կարևոր ուշարձանի։

Սակայն, իրողությունն այն է այսօր, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում և շրջափակում ակափել են և մեծ թափով առաջ են տարվում վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, որոնց նմանը երբեք չի արձանագրել հայ եկեղեցական պատմությունը։ Երբ այդ աշխատանքները վերջանան, քրիստոնեական ծագում ունեցող եկեղեցիների ամենահինն եղող Էջմիածնի Տաճարը կդառնա, 16 դարի հնություն ունենալով հանդիմա, հայ ճարտարապետության նոր հրաշալիք։ Վերև նշեցինք արդեն, որ հին, պարական տիրապետության շրջանի հողակիր

պարսպի տեղ այժմ բարձրանում է գեղեցիկ տաշված տուֆաքարաշեն պարիսպը: Ինչ վերաբերում է Մայր Տաճարի պատմական նկարազարդության վերականգնման աշխատանքներին, նրանք կատարվում են Երևանի Գեղարվեստական ինստիտուտից շրջանավարտ նկարիչներ Խանադյան Գեորգի (Գիգա), Սարգսյան Ալեքսանդրի, Սիրավյան Հենրիկի, Շահբադյան Գեորգի, Հովսեփյան Քնարիկի, Գորգադյան Էմմայի, Հակոբյան Հրանտի և ուրիշների ձեռքով և հսկողությամբ Հայաստանի Պետական թանգարանի և Պատկերասրահի Հին հայկական արվեստի բաժնի պետ, արվեստի վաստակավոր գործիչ, հայ մանրանկարչության հանրածանոթ մանագետ տիկին Դուռնովայի, որի «Հայ մանրանկարչության ակումբ»ը լույս տեսավ անցյալ տարի Լենինգրադում: Անցյալ նոյեմբերի 25-ին սկսված սույն աշխատանքները վերջանալու են առաջիկա հունիսին:

Դավրիժեցիին, Մովսես Տաթևացու կատարած նորոգությունների կապակցությամբ, դրում է. «Եւ օր յաւուր նորոգեալ հաստատէր Սուրբ Աթոռն, որով և՛ ամենայն կարգ

և վրոճք հաւատոյս քրիստոնէութեան, վասնզի համբաւ նորոգման Սրբոյ Աթոռոյս հռչակեալ ծաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ, ի Հոռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, և ամենեքեան զուարճացեալք ցնծային»: Այդ ցնծությունը տեղի էր ունեցել, երբ Հայաստան աշխարհը հեծեծում էր պարսիկ խաների և օսմանցի հորդանների բիրտ կրոնականների տախ: Անտարակույս, անհամեմատորեն և անսահմանորեն մեծ պիտի լինի հանուր հայության ցնծություն ու զվարճությունը՝ գերագահ Մայր Աթոռի հաստատման և Գրիգոր Լուսավորչի ձեռամբ հիմնված Հայաստանյայց Միածնաէջ Մայր Եկեղեցու գերիվեր պայծառացման ի լուր, մանավանդ, երբ այդ պայծառացումը տեղի է ունենում Հայաստանի իմաստուն կառավարության հայրախնամ հոգատարությամբ:

Թող հավիտ օրհնյալ լինի հիշատակը երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի, որ եղավ մարգարե ներշնչողը համորեն հայկազանց հոգևոր միության կենտրոն և լուսո խորան Ս. Էջմիածնի հրաշակերտման:

